ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Համընդհանուր ներառական կրթության կազմակերպման առանձնահատկությունները մանկապարտեզում

Վերապատրաստվող՝ անուն, ազգանուն, հայրանուն
Քրիստինե Ներսեսյան Սամվելի

«Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ

Վերապատրաստող՝ մ. գ. թ. , Թագուհի Գասպարյան

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1. Հասկացություն ներառական կրթության մասին

1.1. Հիմնահարցի լուսաբանվածության աստիճանը գիտամեթոդական գրականությունում.....5

1.2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի նախադպրոցական մակարդակի գնահատման առանձնահատկությունները.....7

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2. Համընդհանուր ներառական կրթության կազմակերպման առանձնահատկությունները մանկապարտեզում

2.1. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման մեխանիզմները:.....10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....17

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....18

ՀԱՎԵԼՎԱԾ.....19

Ներածություն

Հետազոտության արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Գաղտնիք չէ, որ երեխայի կյանքի սկզբնական փուլը էական ազդեցություն է ունենում հետագա զարգացման, առողջության, ուսուցման, կայացման և այլ հնարավորությունների վրա: Նախադպրոցական կրթությունը առանձնապես կարևոր է նաև հաշմանդամություն ունեցող երեխաների համար՝ հաշվի առնելով երեխաների ընդհանուր զարգացման, սոցիալականացման և հաղորդակցման հնարավորությունները կրթական գործընթացում: Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում նախադպրոցական կրթական համակարգում առկա հիմնախնդիրներն առնչվում են ոչ միայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այլև տարբեր սոցիալական խմբերի և տարբեր խոցելիության աստիճան ունեցող երեխաներին: Սակայն անառարկելի է, որ այն երեխաները, ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, շարունակում են մնալ առավել խոցելի և թիրախավորված: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառում ասելով հասկանում ենք այն հնարավորությունները, որ պետք է ունենա կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան. ինչպես օրինակ գտնվի իր հասակակիցների կողքին, հաճախի իր բնակավայրին մոտ գտնվող հաստատություն, կարողանա կրթվել ու զարգանալ անվտանգ և ապահով միջավայրում, մասնակցել տարբեր միջոցառումների, խաղերի և այլն:[7 էջ 85]

Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Նախադպրոցական կրթությունն ամբողջական գործընթաց է, որն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխայի բազմակողմանի զարգացման ապահովմանը՝ նրա հակումներին, ընդունակություններին, կարողություններին, անհատական, հոգեկան և ֆիզիկական առանձնահատկություններին համապատասխան: Նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման գործում գլխավոր դերը պետությունը վերապահում է ընտանիքին՝ պարտավորվելով պայմաններ ստեղծել ընտանիքում երեխաների համակողմանի զարգացման և խնամքի կազմակերպման համար: Ընտանիքին աջակցելու համար պետությունը ստեղծում է նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Կրթության իրավունքի իրացումը, կրթական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը հավասարապես կարևոր են նախադպրոցական և լրացուցիչ կրթության տիրույթներում, քանզի վերջիններս ձևավորում են զարգացման չընդհատվող շղթա, որը սկսվում է անհատի վաղ մանկությունից և շարունակվում մինչև մասնագիտական որակավորումը: Երկրի

կրթական համակարգի արդյունավետությունը պայմանավորված է ամբողջական, լիարժեք, արդյունավետ և շարունակական կրթական ծառայությունների մատուցմամբ: Նախադպրոցական ներառական կրթության ապահովումը առաջին ֆորմալ քայլն է, որը նպաստում է երեխայի կրթության իրավունքի իրացմանը: Նախադպրոցական կրթությունը նպաստում է նաև հետագայում հանրակրթական դպրոցում սահուն ներառման հնարավորությանը:[1 էջ 15]

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել համընդհանուր ներառական կրթության կազմակերպման առանձնահատկությունները մանկապարտեզում:

Հետազոտության օբյեկտը համընդհանուր ներառական կրթության կազմակերպման գործընթացն է:

Հետազոտության առարկան համընդհանուր ներառական կրթության կազմակերպման մոտեցումներն ու հնարներն են:

Հետազոտության նպատակը, առարկան, օբյեկտը առաջ բերեցին և որոշեցին հետազոտության հետևյալ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել հիմնախնդրի դրվածքը գիտամեթոդական գրականությունում,
2. Պարզել, թե ըստ օրենքի մանկապարտեզներում ինչպես պետք է իրականացվի համընդհանուր ներառական կրթությունը:
3. Ուսումնասիրել, թե ինչպիսին է ընդունելության կարգը և չափորոշիչները:
4. Պարզել, թե հատուկ կրթությամբ ի՞նչ մասնագետներ են աշխատում երեխաների հետ:
5. Բացահայտել, թե ինչ դժվարություններ և խնդիրներ են վեր հանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողները:
6. Վեր հանել նախադպրոցական տարիքի երեխաների ներառմանն ուղղված առաջարկներ:

Հետազոտության մեթոդոլոգիական հիմք են հանդիսացել հատուկ մանկավարժության, հատուկ հոգեբանության առաջատար գիտնականների հետազոտությունների արդյունքները, հետևությունները ու տեսությունները:

Նշված նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար կիրառել ենք **հետազոտության հետևյալ մեթոդները.**

- Գիտամեթոդական գրականության ուսումնասիրում ու վերլուծություն:
- Դաստիարակների, հատուկ մանկավարժների աշխատանքային փորձի ուսումնասիրում, ընդհանրացում:
- Հոգեբանամանկավարժական հետազոտության մեթոդներ՝ դիտում, զրույց, հարցում, գիտափորձ:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Հետազոտական աշխատանքը կազմված է 15 համակարգչային էջից, բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածից:

ԳԼՈՒԽ 1. Հասկացություն ներառական կրթության մասին

1.1. Հիմնահարցի լուսաբանվածության աստիճանը գիտամեթոդական գրականությունում

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

1993 թ.-ին Հայաստանը միացել է «Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային», իսկ 1996 թ-ին ընդունել է «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը: Կրթության իրավունքը սահմանված է ՀՀ սահմանադրությամբ: ՀՀ Սահմանադրությունը, շեշտադրելով «Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի» դրույթները, սահմանում է, որ Հայաստանում յուրաքանչյուր երեխա ունի հավասար և որակյալ կրթություն ստանալու իրավունք:[2 էջ 12]

ՀՀ Ազգային ժողովը 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը:

Ներառական կրթությունը՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է: [5 էջ 8]

Արդի շրջանում, առավել քան առկա է այն գիտակցումը, որ յուրաքանչյուր երեխայի զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ՝ հաշվի առնելով նրա անհատական ընդունակությունները, կարողությունները և կրթական պահանջները:

Նոր ձևավորված համակարգը հնարավորություն կընձեռի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հանրակրթական ուսումնական հաստատություն: Ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունքում նախատեսվում է ընդլայնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որակյալ կրթություն

ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության համակարգ բոլոր հանրակրթական դպրոցներում: [7 էջ 3]

Երեխայի կյանքի առաջին 6 տարիները աճի և զարգացման համար կարևորագույն շրջան են, քանի որ այդ շրջանի բացթողումները կամ ձեռքբերումները կարող են ազդել անհատի կյանքի ողջ ընթացքի վրա: Կրթական համակարգի կարևորագույն օղակը վաղ մանկական կրթությունն է, որի նպատակն է բարելավել 3-6 տարեկան երեխաների ճանաչողական ոլորտը, հոգեբանական, ֆիզիկական զարգացումը և սոցիալականացումը:

Ներառական կրթության հիմքում ընկած է այն գաղափարախոսությունը, որը բացառում է երեխաների ցանկացած խտրականություն, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց նկատմամբ, բայց ստեղծում է հատուկ պայմաններ կրթական հատուկ պահանջմունքներ ունեցող երեխաների համար:

Ներառական կրթությունը որդեգրում է երեխայակենտրոն մեթոդաբանություն՝ համաձայն որի բոլոր երեխաները ուսուցման տարբեր պահանջմունքներով անհատականություններ են: Ներառական կրթությունը դասավանդման և ուսուցման ոլորտում ջանում է մշակել այնպիսի մոտեցումներ, որոնք ուսուցման տարբեր պահանջմունքներ բավարարելու հարցում կլինեն առավել ճկուն: Եթե ներառական կրթության ներդրված փոփոխությունների արդյունքում դասավանդումն ու ուսուցումն ավելի արդյունավետ դառնան, ապա կշահեն բոլոր երեխաները (ոչ միայն կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները):

Նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթության համակարգը ներդրվում է համաձայն ՀՀ Կառավարության հաստատած գործողությունների պլանի և ժամանակացույցի՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը: [3 էջ 18] «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 06.05.2020թ.-ին ընդունված ՀՕ-267-Ն օրենքի համաձայն՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ ՆՈՒՀ), երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրվում են երեք մակարդակում՝

1) նախադպրոցական մակարդակ՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության կողմից.
2) տարածքային մակարդակ՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից.
3) հանրապետական մակարդակ՝ հանրապետական մանկավարժա-հոգեբանական կենտրոնի կողմից:

Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասն է կազմում նախադպրոցական տարիքի երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը: [9 էջ 2]

1.2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի նախադպրոցական մակարդակի գնահատման առանձնահատկությունները

Եթե նախադպրոցական կրթության ցանկացած փուլում երեխայի մոտ նկատվում են կայուն դժվարություններ, որոնք խանգարում են երեխային իր կարողությունների չափով մասնակցություն ունենալ ուսումնառության գործընթացում, ապա դաստիարակը, համաձայնեցնելով երեխայի ծնողի հետ, գրավոր դիմում է ՆՈՒՀ-ի տնօրենին՝ իրականացնելու երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի նախադպրոցական մակարդակի Գնահատում: Գնահատումը սկսելուց առնվազն մեկ շաբաթ առաջ ՆՈՒՀ-ի տնօրինությունը գրավոր տեղեկացնում է երեխայի ծնողին նախադպրոցական մակարդակի գնահատման նպատակների մասին: Ծնողի գրավոր համաձայնությունը ստանալու օրվանից 3-օրյա ժամկետում, տնօրենի հրամանով հանձնարարվում է աջակցության խմբին իրականացնել երեխայի նախադպրոցական մակարդակի Գնահատում: [10 էջ 3]

Երեխայի Գնահատումն իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի սահմանելու՝

1) երեխայի կրթության առանձնահատուկ պայմանները՝ ապահովելով ծրագրային, մեթոդական և այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ,
2) ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքերը,
3) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը:

Գնահատումն իրականացվում է երկու փուլով.

1) նախադպրոցական մակարդակի Գնահատում,
2) տարածքային մակարդակի Գնահատում:

Նախադպրոցական մակարդակի Գնահատումը սկսվում է դիտարկումով, որը տեղի է ունենում երեխայի բնական միջավայրում՝ ուսուցման ընթացքում, խմբասենյակում, միջոցառումների, բակային շարժախաղերի ժամանակ և այլն: Դաստիարակը՝ որպես դիտարկում իրականացնող գլխավոր անձ՝ համագործակցելով ծնողների, ՆՈՒՀ-ի մանկավարժահոգեբանական աջակցության խմբի (առկայության դեպքում), երգ-երաժշտության, ֆիզկուլտուրայի, օտար լեզուների և այլ մանկավարժների հետ, որոշակի ժամանակահատվածում, դիտարկման մեթոդի միջոցով, հավաքագրում է համապատասխան տեղեկատվություն երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, անձնային որակների, կարիքների ու դժվարությունների, հասակակիցների հետ փոխհարաբերությունների և այլի մասին: Երեխայի հնարավորությունների, կարիքների և զարգացման առկա մակարդակի դիտարկումը շատ կարևոր է նրա

հետագա ուսումնառությունը պլանավորելու և կազմակերպելու համար: Գնահատման այս փուլը, որը ներառում է երեխայի դաստիարակի, երեխայի հետ աշխատող մանկավարժների և այլ մանկավարժահոգեբանական աշխատողների դիտարկման արդյունքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը, տևում է 10-15 օր՝ ծնողի գրավոր դիմումի ընդունման օրվանից հաշված: Դիտարկման արդյունքների հիման վրա լրացվում է «Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ը, իսկ արդյունքները արձանագրվում են «Նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկ» ձևաթղթում: Եթե երեխայի նախադպրոցական մակարդակի Գնահատման արդյունքների վերլուծությունը չի վկայում երեխայի մոտ որևէ ֆունկցիայի խանգարման հավանականություն, ապա մանկավարժահոգեբանական աջակցության խումբը մշակում է «Կանխարգելիչ միջամտությունների պլան»՝ ծառայությունների տրամադրման և միջավայրային հարմարեցումների վերաբերյալ՝ վեց ամսվա համար (նպատակներ և դեպի այդ նպատակները տանող քայլեր, ուսուցման մեթոդներ, տեղի և խմբասենյակի վերադասավորումներ, ժամանակի կազմակերպում և այլն): [10 էջ 4]

Եթե երեխայի նախադպրոցական մակարդակի Գնահատման արդյունքների վերլուծությունը վկայում է երեխայի որևէ ֆունկցիայի խանգարման հավանականություն, ապա հաստատությունը, ծնողի համաձայնությամբ, դիմում է Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն՝ իրականացնելու տարածքային մակարդակի Գնահատում:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի տարածքային մակարդակի Գնահատում իրականացնելու նպատակով, ՆՈՒՀ-ը Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն է ներկայացնում է երեխային կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի տարածքային մակարդակի գնահատման ներկայացնելու դիմումը՝ ծնողի համաձայնության առկայությամբ և կից փաստաթղթերով.

- երեխայի ծննդյան վկայականի և ծնողի անձնագրի պատճեններ,
- երեխայի առողջական վիճակի մասին փաստաթուղթ,
- նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկ,
- Կանխարգելիչ միջամտությունների պլան՝ առկայության դեպքում:

Հաստատության տնօրինության կողմից դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո, Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը նշանակում է երեխայի տարածքային մակարդակի Գնահատումը սկսելու օրը՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում, որի մասին տեղեկացնում է ՆՈՒՀ-ի տնօրինությանը: [6 էջ 4]

Երեխայի տարածքային մակարդակի Գնահատումն իրականացվում է որոշելու համար երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը և դրանով (կամ դրանցով) պայմանավորված՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: Եթե Տարածքային մակարդակի գնահատման արդյունքները վկայում են որևէ

ֆունկցիայի խանգարման մասին, ապա մանկավարահոգեբանական աջակցության ծառայությունները երեխային տրամադրվում են Տարածքային մակարդակում՝ «Անհատական ուսուցման և զարգացման պլան»-ի հիման վրա։

Եթե ծնողը համաձայն չէ Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից իր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի տարածքային մակարդակի Գնահատման արդյունքների հետ, ապա նա կարող է բողոքարկել՝ դիմելով Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն: Հանրապետական մանկավարժա-հոգեբանական կենտրոնը ընթացք է տալիս երեխայի ծնողի գրավոր բողոքին՝ այն ստանալու օրվանից առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Նախադպրոցական մակարդակի գնահատումը դիտարկման միջոցով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մասին բազմաբնույթ տեղեկությունների հավաքման, համակարգման և եզրահանգումներ կատարելու մի գործընթաց է, որի արդյունքում սահմանվում է, թե ի՞նչ է անհրաժեշտ երեխային նախադպրոցական ուսումնական հաստատությունում (այսուհետ՝ ՆՈՒՀ), տանը, շրջապատում հետագա զարգացման և անկախ լինելու համար: Նախադպրոցական մակարդակի գնահատում իրականացնելու համար Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից մշակվել և ուսումնական հաստատություններին է տրամադրվել «Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ը, որը թույլ է տալիս սահմանել այն ոլորտները, որտեղ երեխան ունի լրացուցիչ աջակցության կարիք, ինչպես նաև որոշել երեխայի ինքնուրույնության մակարդակը կամ պահանջվող աջակցության չափը: «Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ը կիրառվում է այն դեպքում, երբ ծնողն ունի երեխայի հետ կապված մտահոգություններ և գրավոր դիմում է ՆՈՒՀ-ի տնօրենին, որպեսզի մանկավարժահոգեբանական աջակցության խումբը իրականացնի նախադպրոցական մակարդակի գնահատում: «Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ի միջոցով ամփոփվում են ՆՈՒՀ-ի մանկավարժահոգեբանական աջակցության խմբի և դաստիարակների դիտարկման արդյունքները: [10 էջ 12]

ԳԼՈՒԽ 2. Համընդհանուր ներառական կրթության կազմակերպման առանձնահատկությունները մանկապարտեզում

2.1. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման մեխանիզմները:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ասելով հասկանում ենք ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է երեխային, նրա ծնողին, դաստիարակին և մանկավարժական աշխատողին: Այսօր շատ է խոսվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների իրավունքների, լիարժեք ուսուցման, նրանց պահանջմունքների և անհրաժեշտ հարմարեցումների մասին: Մեր բոլոր ջանքերը պետք է ուղղված լինեն նրան, որպեսզի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան օգտվի իր իրավունքներից՝ օգտագործելով իր բոլոր հնարավորությունները: Ինչպես իր հասակակիցները՝ նա ևս պետք է մասնակցի սոցիալական կյանքի բոլոր տեսակներին ու ձևերին, ստանա համապատասխան ուսուցում: Շատ կարևոր է, որ երեխայի ծնողների, ընկերների, մանկավարժների և այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքի արդյունքում երեխային, տրամադրենք այնպիսի աջակցություն, որը կբարձրացնի նրա ակտիվությունն ու մասնակցությունը: [2 էջ 6]

Ինչ է իրենից ներկայացնում աջակցությունը

Առօրյա կյանքում, ուսման և գործունեության այլ բնագավառներում երեխայի ակտիվությունն ու մասնակցությունը բարձրացնելու համար աջակցությունը պետք է ուղղված լինի.

- Երեխայի ուսուցման, դաստիարակության, սոցիալական ադապտացիայի օպտիմալ պայմանների և հարմարեցումների ստեղծմանը:
- Միասնական կրթական միջավայրի ապահովմանը:
- Երեխաների պոտենցիալ հնարավորությունների զարգացմանը միասնական գործունեության ընթացքում:
- Երեխայի կյանքի կարևորագույն փորձի, իմացական, խոսքի, շարժողական ոլորտների, սոցիալական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:
- Ուսումնական գործունեության ընթացքում զարգացնող աշխատանքների արդյունավետության ապահովմանը:
- Բացասական դրսևորումների /հուզական, վարքային/ հաղթահարմանը՝ բարենպաստ գործունեության մեջ ընդգրկման միջոցով:
- Դրական գործունեությամբ զբաղվելու դրդապատճառների բարձրացմանը:
- Երեխաների նյարդային և հոգեկան վիճակների պահպանմանն ու ամրապնդմանը:
- Երեխայի դաստիարակության և զարգացման գործում ընտանիքի դերի կարևորմանը:

- Համապատասխան գրականության, անհատական, ուսումնական, տեխնիկական միջոցների, դիդակտիկ նյութերի ստեղծմանը:
- Կրթական կարիքին համապատասխան անհատական ծրագրերի ապահովմանը: [6 էջ 7]

Ուսուցման մեջ դժվարություն ունեցող երեխային, անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրվի նաև աջակցման այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ հոգեբանական, լոգոպեդական, հատուկ մանկավարժական, վերականգնողական: Ելնելով երեխայի զարգացման առանձնահատկություններից՝ կարող է տրամադրվել համապատասխան հարմարեցումներ՝ միջավայրային, մեթոդական:

Ցանկացած դժվարություն, հնարավոր է հաղթահարել միայն այն դեպքում, երբ համագործակցում են բոլոր այն անձինք, ովքեր այս կամ այն կերպ կապ ունեն երեխայի հետ:

Ծնող

Ընտանիքին աջակցելու լավագույն տարբերակներից են ծնողական ակումբները:

Ծնողական ակումբը, որն իրենից ներկայացնում է տարբեր ծնողների միավորում, իր առջև դնում է հետևյալ նպատակները.

- ծնողների մոտ ադեկվատ ընկալման ձևավորում՝ իրենց իսկ երեխայի նկատմամբ: Կարևոր է շրջանցել «հիվանդություն» հասկացությունը և անցնել «զարգացման հատուկ կարիքներ» հասկացության
- ընտանիքում բարենպաստ միջավայրի ձևավորում՝ ուղղված երեխայի անհատական, ստեղծագործական և սոցիալական հնարավորությունների բացահայտմանը
- ծնողների և հաստատության միջև գործնական փոխհարաբերությունների ձևավորում
- ծնողների անհատական և սոցիալական զարգացում, սոցիալական ակտիվության և վարքագծի կառուցողականության հմտությունների ձևավորում:[3 էջ 2]

Ծնողական ակումբում կիրառվում են աշխատանքների տարբեր ձևեր.

- ✓ երեխայի զարգացման հարցերի վերաբերյալ անհատական խորհրդատվություն
- ✓ տարբեր արտակումբային միջոցառումների կազմակերպում /թատրոններ, թանգարաններ, ցուցահանդեսներ, արշավներ և այլն/
- ✓ զարգացնող, կրթող սեմինարները, միջոցառումներ
- ✓ հոգեբանական թրեյնինգներ, հասարակական ակցիաներ
- ✓ մասնակցություն մամլո-ակումբներին և կլոր սեղաններին՝ ընտանիքում երեխաների դաստիարակության փորձի վերաբերյալ հրատարակություններ, հանդիպումներ իշխանության ներկայացուցիչների հետ,
- ✓ պարապմունքներ «երեխա-ծնող-մասնագետ» համակարգում, երեխայի զարգացման առաջընթացի մասին փորձաքննության մասնակցություն:

Ծնողները պետք է ստեղծեն երեխայի բնականոն զարգացմանը նպաստող դրական մթնոլորտ: Այդ հարցում ընտանիքներին պետք է աջակցեն սոցիալական մանկավարժները:

Ընտանիքներն ընտրում են ներառական կրթություն իրականացնող նախադպրոցական ուսումնական հաստատություններ, որպեսզի իրենց երեխաները կարողանան ազատ շփվել և հաղորդակցվել հասակակիցների հետ, իսկ ծնողները՝ այլ ծնողների և մասնագետների հետ: ՆՈՒՀ-ի դաստիարակները պետք է ստեղծեն համագործակցության արդյունավետ մեխանիզմներ ընտանիքի և նախադպրոցական ուսումնական հաստատության միջև: Այդ ամենի համար առաջին հերթին անհրաժեշտ է ստեղծել հուզական կոնտակտ, վստահություն, ցուցաբերել հարգանք, աջակցել ծնողներին, ընդունել և հաշվի առնել ծնողների կարծիքը: [8 էջ 11]

Դաստիարակ

ՆՈՒՀ-ում, որտեղ իրականացվում է ներառական ուսուցում, հիմնական աշխատանքը իրականացվում է խմբասենյակում՝ դաստիարակի և երեխայի շփման ժամանակ: Հաճախ դաստիարակներին տրվող աջակցության բացակայությունը լուրջ խոչընդոտ է դառնում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցումը ճիշտ կազմակերպելու ճանապարհին: Այն դաստիարակներին, որոնց առաջ խնդիր է դրված աշխատել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ, առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնական հաստատության աջակցող թիմի և ղեկավար անձնակազմի օգնությունը: Դաստիարակը աջակցությունը կարող է ստանալ հաստատության լոգոպեդի, հոգեբանի, հատուկ մանկավարժի, ղեկավար անձնակազմի կողմից: Բացի դրանից դաստիարակը պետք է իմանա բոլոր այն սոցիալական օղակների /կառույցների/ մասին, որոնք կարող են աջակցել իրեն այս կամ այն խնդրի ժամանակ: Այդ իսկ պատճառով դաստիարակները, որոնք ճիշտ ներառում իրականացնելու համար աջակցության կարիք ունեն, պետք է ժամանակավորապես դառնան «երեխա», ինչն էլ իրենցից հոգեբանական ճկունություն, պատրաստակամություն և ստեղծագործական միտք է պահանջում:

Դայակ/օգնական

ՆՈՒՀ-ում երեխային տրամադրվող աջակցության գործընթացում կարևոր դեր, նշանակություն ունի դայակը/օգնականը: Դայակի/օգնականի աշխատանքը պետք է պլանավորված լինի, խմբասենյակում պետք է կոորդինացվի դաստիարակի կողմից:

Աջակցության ամենաարդյունավետ եղանակները, թերևս, նրանք են, երբ աջակցող անձը դաստիարակի հետ միաժամանակ ներկա է խմբասենյակում և կարող է իր ուշադրության կենտրոնում պահել մեկ կամ մի քանի երեխայի, որպեսզի օգնի նրանց, որ կատարեն այն նույն աշխատանքը, ինչ մյուսները: Դա նաև հնարավորություն կտա դաստիարակին ավելի շատ ժամանակ տրամադրել յուրաքանչյուր երեխայի: Օրինակ, կարող է հարկ լինել, որ դայակը/օգնականը հարմարեցնի դաստիարակի հրահանգները կամ խնդրի պահանջները այնպես, որ բացատրությունները արվեն մեկից ավելի ձևերով: Կարող է հարկ լինել

հանձնարարությունները բաժանել ավելի փոքր քայլերի կամ ընտրել ավելի պարզեցված տարբերակը:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում առկա վերականգնողական ծառայություններ մատուցող խմբի մասնագետներ

Մանկությունը երեխայի աճի, զարգացման և սովորելու բացառիկ ժամանակաշրջան է: Ֆիզիկական աճի հետ զուգահեռ զարգանում է երեխայի խոսքը, լեզուն, զգացմունքները, սոցիալական շփումը, ճանաչողական գործունեությունը: Երեխայի առողջ, ներդաշնակ և համակողմանի զարգացման համար անհրաժեշտ է աշխատանք տանել ֆիզիկական, իմացական, հուզական և սոցիալական ոլորտների հավասարաչափ զարգացման ուղղությամբ: Այս ուղղությամբ աշխատանքները նախադպրոցական ուսումնական հաստատություններում կազմակերպում են ֆիզիոթերապիստների, էրգոթերապիստների, արտթերապիստների, հեքիաթաթերապիստների, հոգեբանների և այլ մասնագետների կողմից:

Երեխայի կրթության և զարգացման կազմակերպման համար անհրաժեշտ հարմարեցումներ

Ներառական կրթությունը հանրակրթության և հասարակության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն և հասանելիություն բոլորի համար: Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք յուրաքանչյուրի հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն համար:

Բոլոր այն միջոցները, որոնք կիրառվում են ուսուցման և զարգացման գործընթացում և երեխաներին հնարավորություն են տալիս լինել ավելի ակտիվ և մասնակցային, ինքնուրույն կամ հասակակիցների հետ համատեղ իրականացվող գործողությունների ընթացքում, համարվում են հարմարեցումներ: [8 էջ 12]

Ուսումնական գործընթացի հարմարեցումը յուրաքանչյուր երեխայի ուսուցման և ուսումնառության գործընթացին մասնակցելու հավասար հնարավորության և մատչելիության ապահովումն է: Որպեսզի ուսումնական գործընթացը լինի մատչելի և հասանելի բոլոր երեխաների համար, այն պետք է հնարավորինս հարմարեցնել և համապատասխանեցնել երեխաների մտավոր, ֆիզիկական, սոցիալական, հուզական և հոգևոր կարիքներին: Այս ամենը ենթադրում է ուսուցչի և աջակցող թիմի համագործակցային աշխատանք: Կարելի է փոփոխել տրվող առաջադրանքի ներկայացնելու, սովորեցնելու և գնահատելու ձևերը: Ուսուցման գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ բաղադրիչների վրա.

Քանակ՝ առաջադրանքների քանակի փոփոխություն (ավելացում կամ նվազեցում) սերեխայի կարողություններին համապատասխան:

Ժամանակ՝ առաջադրանքների կատարման համար նախատեսված ժամանակահատվածի փոփոխություն (սովորաբար հավելյալ ժամանակի տրամադրում):

Աջակցության չափ՝ երեխայի կարիքների համապատասխան աջակցության տրամադրում, որը կարող է լինել առաջադրանքների կատարման ընթացքում հասակակիցների ներգրավման տեսքով: Ուսուցման ժամանակ կարելի է կիրառել ֆիզիկական (ձեռքից բռնել և միասին անել), վերբալ (ուղղորդող կամ հուշող հարց տալ) և տեսողական (ժեստ, նկար) հուշումներ:

Ներդրում՝ դաստիարակի կողմից ուսումնական գործընթացում տարբեր մեթոդների կիրառումն է (օրինակ տարբեր տեսակի հարմարեցումներ՝ իմացական քարտեզներ, գրաֆիկական սխեմաներ, նկար-քարտեր, հստակ և տեսանելի օրինակներ և դիդակտիկ պարագաներ, հուշումներ, զուգորդությունների ստեղծում իրերի և երևույթների միջև):

Դժվարության մակարդակ՝ ուսուցանվող նյութի փոփոխություն երեխայի կարողությունների և գիտելիքի մակարդակին համապատասխան (օրինակ՝ պարզեցնել առաջադրանքի պահանջները, հարմարեցնել որոշ կանոններ և այլն):

Արդյունք՝ երեխայի գիտելիքների ստուգում իրեն հարմար տարբերակով (օրինակ՝ բանավոր պատասխան կամ նկար-քարտերի միջոցով:

Մասնակցություն՝ ուսումնական գործընթացում երեխայի ակտիվ մասնակցության չափի և ձևի փոփոխություն (օրինակ՝ բաժանում է մատիտները, անհրաժեշտ դիդակտիկ նյութերը):

Նպատակներ՝ ուսուցման գործընթացում նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պարզեցում, հարմարեցում, նպատակների սահմանում երեխայի կարողություններին համապատասխան: [8 էջ 14]

Միջավայրային հարմարեցումներ՝ ուսումնական միջավայրը շատ կարևոր է և դրա հարմարեցումը նույնպես մեծ ազդեցություն է ունենում երեխայի ուսումնառության և զարգացման վրա: Միջավայրի հարմարեցումը ներառում է երեխայի նստելու տեղը, խմբասենյակում, գույքի դասավորվածությունը, ձայնային, լուսային և միջավայրային այլ ազդակները: Միջավայրային հարմարեցումների թվին են պատկանում նաև երեխային այլ անձանց կողմից տրամադրվող աջակցությունը, կրթության կամ անձնական օգտագործման համար անհրաժեշտ սարքավորումները, մեթոդները, տեխնոլոգիաները, որոնք ուսուցման գործընթացը դարձնում են առավել արդյունավետ և երեխային թույլ են տալիս ձեռք բերել գիտելիքներ և հմտություններ:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Հայաստանի Հանրապետությունում դեռևս գործում է 2005 թ. նոյեմբերի 15-ին ընդունված «Նախադպրոցական կրթության մասին» օրենքը, որտեղ հոդված 5-ի 8-րդ ենթակետով սահմանվում է, որ նախադպրոցական կրթության հիմնական սկզբունքներից է նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման առանձնահատկություններին և առողջական վիճակին նախադպրոցական կրթության բովանդակության, մակարդակի և ծավալի համապատասխանությունը: Սակայն այլ սկզբունքներ և խնդիրներ չեն

առանձնացվում, որոնք կկարգավորեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նախադպրոցական կրթություն ստանալու իրավունքը: Համընդհանուր ներառական քաղաքականության արդյունքում Հայաստանի բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատությունները ունեն նպատակ իրականացնելու ներառական կրթություն: Որոշ ՆՈՒՀ-երում առկա է հոգեբանի հաստիք՝ պայմանավորված ծնողների և աշխատակազմի ցանկությամբ: Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ գիտամեթոդական գրականության ուսումնասիրում, հատուկ մանկավարժների, դաստիարակների առաջատար փորձի վերլուծում ու համադրում, զրույց, բանավոր հարցում: Ուսումնասիրությունն անցկացվել է 2022 թվականներին: Մասնակցել են 10 հատուկ մանկավարժ ու դաստիարակ, ինչպես նաև ԿԱՊԿՈՒ երեխաների 10 ծնող: Հարցերին տրվել են տարբեր բնույթի պատասխաններ: Հարցվողների մեծամասնությունը՝ (80%-8 հոգի) կարևորում է մանկապարտեզներում ներառական կրթության իրականացման դերը, իսկ 20%-2 հոգին՝ չի կարևորում՝ նշելով, որ մանկապարտեզները չունեն բավարար պատրաստվածություն (Գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Մանկապարտեզներում ներառական կրթության իրականացման դերի կարևորության վերաբերյալ տվյալներ

Հարցվողների 50%-ը նշել է, որ անհրաժեշտ են փորձառու հատուկ մանկավարժներ, բազմամասնագիտական թիմ, երեխաների հետ մշտական աշխատանք իրականացնելու համար: 20%-ը նշել են, որ մանկապարտեզների մեծ մասը չունի միջավայրային հարմարեցումներ՝ թեքահարթակներ և այլն: 30%-ը գտնում են, որ անհրաժեշտ են ուղեկցորդներ, դայակներ, վերապատրաստված դայակներ ԿԱՊԿՈՒ երեխաների ներառման համար: Մեր կողմից իրականացված զրույցի ընթացքում ծնողների 80%-ը կողմ է մանկապարտեզներում ներառական կրթության իրականացմանը, 20%-ը մտավախություն ունի, որ իր ԿԱՊԿՈՒ երեխան չի կարողանա ներգրավվել մանկապարտեզում: Հարցված ծնողների մեծամասնությունը կարևորել է բազմամասնագիտական թիմի ներկայությունը մանկապարտեզում: Զրույցի ընթացքում ծնողները նշել են, որ երեխայի մանկապարտեզ չհաճախելու

հետևանքով իրենք չեն կարողանում աշխատել։ Հարցվող ծնողների 90%-ը անձամբ է զբաղվում երեխաների խնամքով, իսկ 70%-ը ունի սոցիալական խնդիրներ։

Ծնողներն ահազանգում են, որ երեխաների կրթության իրավունքի իրացումը լիարժեք չի ապահովվում. երկարատև հերթերի պատճառով դժվարությամբ են երեխաներն ընդունվում ՆՈՒՀ-եր, ընդունվելուց հետո առաջանում են տարաբնույթ դժվարություններ՝ կապված միջավայրային հարմարությունների բացակայության, աշխատակիցների ցածր իրազեկվածության և անհրաժեշտ գիտելիքների պակասի, հատուկ մասնագիտական թիմի բացակայության կամ ոչ բավարար լինելու, կարծրատիպային մոտեցումների, վերաբերմունքի, ընկալումների և այլ հարցերի հետ։

Դաստիարակների նշած պատասխանների ու նրանց հետ անցկացրած զրույցների վերլուծությունից պարզ է դառնում, որ նրանք ունեն վերապատրաստումների կարիք ու քչերը ունեն ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի փորձ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գիտամեթոդական գրականության վերլուծությունը, հատուկ մանկավարժների փորձը, տեսակետներն ու մոտեցումները, մանկապարտեզներում համընդհանուր ներառական կրթության իրականացման մակարդակի ցուցանիշները թույլ տվեցին կատարել հետյալ հիմնական եզրակացությունը.

1. Հետազոտության հիմնախնդիրը արդիական է, ունի մեծ նշանակություն ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացում, սակայն դաստիարակները լիարժեք իրազեկված չեն այս գործընթացը զարգացնելու միջոցների վերաբերյալ: Այդ ամենը հաշվի առնելով, առաջարկում ենք իրականացնել վերապատրաստումներ և նախապատրաստել մանկապարտեզներում աշխատող դաստիարակներին:

2. Չնայած գիտամեթոդական գրականությունում ու գործնականում համընդհանուր ներառական կրթության կարևորությանը, այնուամենայնիվ այն համարվում է քիչ ուսումնասիրված: Այս խնդրի ուսումնասիրումը և համապատասխան միջոցների ընտրումը, ստեղծումը և համակարգումը կնպաստի ներառական կրթության մակարդակի բարձրացմանը:

3. Հետազոտության արդյունքում պարզվեց, որ ԿԱՊԿ ունեցող երեխաների ծնողները կողմ են մանկապարտեզներում ներառական կրթության իրականացմանը, սակայն ունեն մտավախություններ, որ իրենց երեխաները լիարժեք չեն ներգրավվի մանկապարտեզում:

4. Համընդհանուր ներառում ապահովելու գաղափարական և քաղաքականության կոնտեքստում՝ յուրաքանչյուր ՆՈՒՀ կարող է ապահովել հաշմանդամություն ունեցող կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդունումը, խնամքի և կրթության կազմակերպումը: Սակայն փաստացի, այդ մանկապարտեզները չունեն այն բոլոր անհրաժեշտ ռեսուրսները, որոնց առկայության դեպքում հնարավոր կլինի իրականացնել ոչ միայն ինտեգրումը, այլև ներառումը: Այդ մանկապարտեզներում չկան հատուկ կրթությամբ մասնագետներ, վերապատրաստված չեն դաստիարակներն ու դայակները, հարմարեցված չէ ֆիզիկական միջավայրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ 1993// ՀՀ-ում ուժի մեջ մտած հոկտեմբերի 22-ին, երևան 2010, 3. Կրթության հատուկ կարիքների գործունեության կառուցվածք, ՅՈՒՆԵՍԿՕ, 1994,

2. Ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց ձեռնարկ, Երևան 2017 հեղինակային հրատարակություն

3. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը, Երևան, 2020 թ.

4. Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ձեռնարկ. -Երևան: 2017.

5. Համընդհանուր ներառական կրթության ներդրման խնդիրները ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքներում , 2019

6. ՅՈՒՆԵՍԿՕ, Բաց ֆայլ ներառական կրթության մասին ԱՄՆ, 2004թ. .

7. www.edu.am,

8. www.disabilityinfo.am

9. https://www.unicef.org/armenia/

10. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142606

ՀԱՎԵԼՎԱԾ

Հավելված 1

Հարցաշար ծնողների համար

1 Ձեր երեխան հաճախո՞ւմ է մանկապարտեզ։
2 Ինչպե՞ս է ընթացել մանկապարտեզ ընդունելու գործընթացը։
3 Արդյո՞ք գնահատվել է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը։
4 Կարևորու՞մ եք համընդհանուր ներառական կրթությունը մանկապարտեզներում։
5 Օրվա ընթացքում որքա՞ն ժամանակ է երեխան գտնվում ՆՈՒՀ-ում։
6 Կա՞ն արդյոք հատուկ մասնագետներ, ովքեր աշխատում են երեխայի հետ։
7 Ինչպիսի՞ն է շփումը այլ երեխաների հետ ։
8 Ընդհանուր առմամբ ի՞նչն է ամենաշատը ձեզ և ձեր երեխային դուր գալիս մանկապարտեզում
9 Ընդհանուր առմամբ ի՞նչ դժվարություններ ունի երեխան հաստատությունում
10 Հնարավորության դեպքում ի՞նչ կցանկանայիք փոխել հաստատությունում և ինչո՞ւ
11 Ի՞նչ եք կարծում, մանկապարտեզում կան միջավայրային հարմարեցումներ ձեր երեխայի համար։

Հավելված 2

ՆԵՐԱԽԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ